
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական Շիրակ գավառի հայագիտական ուսումնասիրության վերջին մեկուկես տասնամյակն անխզելիորեն կապված է Գյումրիում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ:

Դեռևս անցյալ հարյուրամյակի 70-80-ական թվականներին հանրապետության երկրորդ քաղաքում հասունացած խնդիր էր Գիտությունների ակադեմիայի արդեն գործող երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի կողքին նաև հումանիտար ակադեմիական կառույցի ստեղծումը, և քաղաքային իշխանությունները գիտության այդ երկու թևերի առկայության մեջ իրավացիորեն տեսնում էին Լենինականում Գիտությունների ակադեմիայի Հյուսիսային բաժանմունքի հիմնադրման ամենաիրական հնարավորությունը: Ավելին, խնդիրն արդեն գործնականորեն քննարկվում էր Ակադեմիայի նախագահությունում, ընթացք էին ստացել տեղում Բաժանմունքի համար շինության և նրա ղեկավարության ընտրության հարցերը, այդ մասին սկսել էին խոսել նաև հանրապետական իշխանության ամենավերին օղակներում: Սակայն շուտով՝ 80-ականների կեսերին, հարցը միանգամից գոցվեց, իսկ այդ մասին խոսակցություններն իսպառ լռեցին: Ապա երկիրը հայտնվեց Ադետի հորձանուտում, նրա հյուսիսը՝ արհավիրքի էպիկենտրոնում՝ բյուրավոր անմեղ զոհերով, ավերակված բնակավայրերով, հարյուր հազարավոր անօթևաններով: Ապա պարտադրված պատերազմ եղավ՝ Արցախյան հերոսամարտը:

Որքան էլ տարօրինակ էր, սակայն կիսավեր Գյումրիում այդ օրերին նաև հայագիտությունից սկսեցին խոսել և ամենևին՝ ոչ պատահաբար: Ուղղակի պատահել էր այն, որ երկրագիտական թանգարանի մի խումբ երիտասարդ գիտաշխատողներ 1994-ի խոր աշնանը, ի հեճուկս ամեն տեսակ դժվարությունների, մթի ու ցրտի, անտեսելով ամեն տեսակի անհարմարությունները, Գյումրի հրավիրեցին հանրապետության բազմաթիվ հայտնի հայագետների՝ քննարկելու Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության վիճակը: Ի մեծագույն պատիվ ու հարգանք հայրենական գիտության մերօրյա մշակներին՝ հանրապետության հայագիտական միտքը մի տեսակ կարոտով ու անչափ ջերմորեն արձագանքեց հրավերին: Գիտաժողովի հաջողությունը կատարյալ եղավ: 1996-ին գումարված երկրորդ նույնանման գիտաժողովն այլևս որևէ մեկին չզարմացրեց: Նույնիսկ ավելի ներկայացուցչական եղավ: Գիտական գնահատանքի ներկայացվեցին առաջին գիտաժողովից հետո հանրապետությունում Շիրակի նյութական ու հոգևոր մասունքների ուսումնասիրության ուղղությամբ նոր ձեռքբերումները: Կարևոր էր նաև այն, որ բացահայտելով մար-

զում հայագիտական հետազոտությունների մակարդակը, տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովներն էականորեն նպաստեցին Գյումրիում ակադեմիական հումանիտար կառույց ունենալու վաղեմի ու չարչրկված հարցի «վերակենդանացմանը»: Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունն ըմբռնումով ընդառաջ գնաց մարզային իշխանությունների և քաղաքի մտավորականության խնդրանքին ու հանրապետության մի շարք անվանի գիտնականների (Վ. Բարխուդարյան, Ս. Համբարձումյան, Ա. Քալանթարյան, Լ. Հախվերդյան, Ս. Հարությունյան, Ա. Մելքոնյան և ուրիշներ) միջնորդությանը՝ Կառավարության քննարկմանը ներկայացնելով Գյումրիում հայագիտական կառույց հիմնելու առաջարկը:

Եվ, ահա, 1997-ի կեսերից սկսեց գործել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ, իսկ 2002-ից ինքնուրույն և մեր երկրում առաջմ միակ ակադեմիական ոչմայրաքաղաքային հումանիտար կառույցը՝ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը:

Շիրակի հայագիտականի գոյության ոչ լրիվ տասնվեց տարիները ինքնահաստատման ու ձեռքբերումների տարիներ եղան: Նախ հստակեցվեցին պատմական գավառի հնագիտության, ազգագրության, բանահյուսության ու պատմության գիտական ուսումնասիրության մեջ կենտրոնի առաջնահերթությունները, պատվի գործ համարվեց հետազոտական աշխատանքի բարձր որակի ապահովումը պետական ֆինանսավորմամբ թեմատիկ ծրագրերում, որոնք այդ ընթացքում հասան տասնհինգի և կառավարվում են ամենայն պատասխանատվությամբ ու բարեխղճորեն:

Արժեքավոր հետազոտություն նվիրվեց Բենիամինի հնավայրին՝ անտիկ դամբարանադաշտին ու բնակավայրին, հայտնաբերվեցին Անիի քարանձավային արվարձանը և ուրարտական ամրոց-բնակավայրը Հայկաձորում, Մեծ Սեպասարի վաղբրոնզեդարյան տաճարական համալիրը Աշոցքի տարածաշրջանում և Ազատանի մ. թ. ա. 1-ին հազարամյակի եռաշերտ հուշարձանը (պ. գ. թ. Լ. Եզանյան, Հ. Խաչատրյան):

Հայկաձորի քարանձավային հնավայրի՝ որպես Անի արվարձանի հետազոտությունը կարևորվում է հատկապես միջնադարյան Անիի նյութական մշակույթի մասին մեր պատկերացումների հարստացման առումով: Մայրաքաղաքի օրգանական շարունակությունը հանդիսացող արվարձանը քարանձավ-բնակարանների մի համալիր է, որի շարունակվող պեղումներով բացվող բնակարանները և հայտնաբերված գտածոները մայրաքաղաքի այս հատվածի ճարտարապետական լուծումների, շինարարական սկզբունքների, հասարակ բնակչության կենցաղի ու մշակույթի մի շարք տարաբնույթ հարցերի ուսումնասիրության համար հարուստ նյութ են հանդիսանում, հետևաբար, կարևոր գիտական արժեք ու նշանակություն ունեն: Բսկ ուրարտական ամրոց-բնակավայրի հնագիտական ուսումնասիրությունը նորովի լույս է սփռում տարածքի մ. թ. ա. 1-ին հազարամյակի պատմության ու մշակույթի մի շարք հիմնախնդիրների լուծման վրա:

Գիտականորեն արժեվորվել է Մեծ Սեպասարի հնավայրից հայտնաբերված ծխական առարկաների պաշտամունքային դերը հնդեվրոպական դիցարանության և հավատալիքների համատեքստում: Տաճարական համալի-

րի պեղված սրբարանում փաստված ծիսական արարողությունների նյութական մնացորդները (արդուզարդի առարկաներ, տարաբնույթ անոթներ և այլն), ինչպես նաև զոհաբերված գայլերի գանգերը եզակի են և լավագույնս են վկայում տարածքի հնդեվրոպական ցեղերով բնակեցված լինելը: Պեղումներով հայտնաբերված հարուստ նյութը կարևորվում է ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի նյութական մշակույթի, այլև բնակչության հոգևոր պատկերացումների բացահայտման առումով: Պեղումների շարունակումն ավելի ամբողջական կդարձնի պատկերացումը այս վաղբրոնզեդարյան հնավայրի պատմամշակութային անգնահատելի արժեքի, պատմական ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, հավատալիքների ու կենցաղի մեջ նրա տեղի ու նշանակության մասին:

Ազատանի մ. թ. ա. 1-ին հազարամյակի ամբողջ-բնակավայր-դամբարանադաշտ համալիրը խիստ բացառիկ է իր բոլոր բաղկացուցիչների լավ պահպանվածությամբ և հիանալի հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկել մ. թ. ա. XII դարից մինչև հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթն իր զարգացման մեջ:

Կենտրոնում տարիներ առաջ սկիզբ է առել ու շարունակվում է Շիրակի հնագույն պատմության մի շարք հիմնախնդիրների՝ մ. թ. ա. 1-ին հազարամյակում Ախուրյանի ավազանի երկրների և ցեղային միությունների տեղադրմանը, նրանց տեղորոշմանը, հատկանունների (տեղանուններ, երկրանուններ, ցեղանուններ, ջրանուններ) ստուգաբանությանը, բնակչության էթնիկական պատկանելությանը, նրա հնդեվրոպական հիմքի ճշգրտմանը, լեզվին, կրոնական հավատալիքներին ու սովորույթներին վերաբերող մի շարք վիճահարույց հարցերի քննությունը (պ. գ. դ. Ս. Պետրոսյան, պ. գ. թ. Լ. Պետրոսյան): Վերջին շրջանում, հատկապես վրացական պատմագիտության մեջ լուրջ հավակնություններ են դրսևորվում Ախուրյանի ավազանի երկրների բնակչության խուրիական կամ վրացական ծագման վարկածն ամեն կերպ հիմնավորելու ուղղությամբ (Թ. Գամկրելիձե և այլք): Ավելին, սրվում են Ախուրյանի ավազանի՝ վրացական ցեղերի նախահայրենիքի մաս կազմելու վերաբերյալ օտարալեզու մասնագիտական գրականության մեջ (Բ. Դյակոնով, Բ. Իվանով, Թ. Գամկրելիձե և այլք) շրջանառվող և ընդգծված հակահայ ուղղվածություն ունեցող վարկածները: Ուստի կենտրոնում արդեն մի քանի տարի շարունակ իրականացվող պատմագիտական քննությունը՝ սեպագիր սկզբնաղբյուրներում առկա հատկանունների գիտական ստուգաբանություններով, ավազանի երկրների բնակչության հնդեվրոպական հիմքերի բացահայտմամբ, նրա հավատալիքների ու սովորույթների հանգամանալի ուսումնասիրությամբ, շատ կարևոր է վերոնշյալ կեղծ վարկածների հակագիտական էությունը բացահայտելու, մեր հարևանների նմանատիպ այլ նկրտումները չեզոքացնելու տեսակետից:

Ի մասնավորի՝ առաջ է քաշվել գիտականորեն հիմնավորված այն համարձակ հարցադրումը, ըստ որի՝ հնդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքը ժառանգվել է նաև հայերի կողմից և կիրարկվել տարբեր բնագավառներում, այդ թվում՝ նաև քաղաքաշինության մեջ, ինչի ապացույցը Ախուրյանի ավազանի տարածքում կառուցված Տիգնիս, Ե-

րազգավորս և Շիրակավան բնակավայրերն են՝ հիմնադրված համապատասխանաբար զինվորական, քրմական և բարիքներ արտադրող դասերի կողմից: Ձեռք բերված հիմնական արդյունքն այն դերի հստակեցումն է, որ ունեցել են հնդեվրոպական եռադասյա հասարակության սկզբունքները ավագանի բնակչությունը ցեղամիությունների մեջ և Հայկական լեռնաշխարհի տարբեր ցեղամիությունները միասնական պետական օրգանիզմի մեջ միավորելու գործում: Այս ամենը լավ հիմքեր են նախապատրաստում հետագայում ամբողջացնելու հայ ժողովրդի շիրակյան հատվածի մ. թ. ա. 1-ին հազարամյակի էթնոլեզվական, հոգևոր-մշակութային, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պատմության ուսումնասիրությունը:

Շիրակի նորագույն պատմությունը ևս բազմաթիվ նախատիպերի հաղթահարման ու կնճռոտ հարցերի նորովի մեկնաբանման կարիք ունի: Կենտրոնի մի խումբ երիտասարդ պատմաբանների կողմից (դեկ.՝ պ. գ. թ. Ա. Հայրապետյան) կատարված բավականին արդյունավետ աշխատանքը՝ նվիրված Ալեքսանդրապոլի գավառի պատմաժողովրդագրական պատկերի ու վերջինիս փոփոխությունների հանգամանալի ուսումնասիրությանը, ամուր հիմք հանդիսացավ գավառի ու նրա կենտրոն Ալեքսանդրապոլ քաղաքի XX դարասկզբի տասնամյակների (մինչև խորհրդայնացումը) պատմության մի շարք վիճահարույց հարցերի ուսումնասիրության համար: Թափ առավ 1917–1918 թթ. ընթացքում գավառի տարածքում արևմտահայ գաղթականության տեղաբաշխման և գավառի էթնոժողովրդական իրավիճակի վրա գաղթերի թողած ազդեցության վերաբերյալ արխիվային նյութերի հավաքման և վերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքը: Ավարտին հասցվեց Ալեքսանդրապոլի գավառի XX դարասկզբի ժողովրդագրական իրավիճակին, գավառի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, Ալեքսանդրապոլում գործող հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությանը վերաբերող արխիվային նյութերի հավաքումն ու վերլուծությունը (պ. գ. թ. Կ. Ալեքսանյան): Գիտական նորովի մեկնաբանություն են ստացել 1918 և 1920 թվականներին Ալեքսանդրապոլի թուրքական ռազմակալման վերաբերյալ հայ պատմագիտության մեջ առկա որոշ հարցադրումներ, ուրվագծվել է գավառակենտրոնի՝ այդ շրջանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի, նաև բարոյահոգեբանական իրավիճակի՝ վայրիվերումներով լի պատկերը (պ. գ. թ. Գ. Այվազյան):

Կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» ծրագրի մյուս բաղադրիչը Շիրակի ազգագրական հարուստ շտեմարանի ուսումնասիրությունն է, որ ազգագրագետների խմբի (դեկ.՝ պ. գ. թ. Կ. Բազեյան) կողմից կատարվում է արդեն տասնհինգ տարի: Ալեքսանդրապոլի տնտեսական զբաղմունքների, տնտեսվարման օժանդակ ձևերի ու եղանակների, արհեստների, համքարությունների, կենցաղի, բնակարանի, կահկարասիի, ծիսատոնական համակարգի, բառուբանի յուրահատկությունների վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների հիմքի վրա շարունակվում է Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմագագրական ծավալուն հետազոտությո-

յան երկրորդ մասի իրականացումը՝ նվիրված քաղաքի լենինականյան ժամանակահատվածի ազգագրական դիմագծի ամբողջացմանը, որի առանձին շտրիխներ՝ տնտեսական կյանքի, հայրենադարձության նշանակության ու ժողովրդագրական տեղաշարժերի, քաղաքի արդյունաբերականացման, քաղաքային արհեստների ու տնտեսական զբաղմունքների փոխակերպումների, գյուղական բնակչության դեպի քաղաք միգրացիայի, քաղաքային մշակույթի, արվեստի և այլ հարցեր ներկայումս Հայագիտականի ազգագրագետների ուշադրության կենտրոնում են:

Մեկ տասնամյակից ավելի կենտրոնի ազգագրագետների և ազգահոգեբանների համար ուսումնասիրության հարուստ նյութ են նաև Գյումրու և Շիրակի մարզի արդի ազգագրական դիմապատկերի, մասնավորապես, ժամանակակից բանահյուսության (նաև «աղետի բանահյուսության») ու նրա փոխակերպումների, ժողովրդական տոների ու ծիսակատարությունների ձևափոխությունների հարցերը (հարսանիք, կնունք, ծնունդ, ուխտագնացություն, մատաղ և այլն): Հատուկ ուշադրություն է դարձվում աղետ ապրած մարդկանց հոգեկարգավորման գործընթացում վերոհիշյալ ազգաբանական իրողությունների (ավանդակարգեր, ծեսեր, տոներ)՝ որպես սեռատարիքային և սոցիալական տարբեր խմբերի պատկանող աղետյալների հարմարմանը օժանդակող պաշտպանական մեխանիզմների էթնոհոգեբանական քննությանը (հ. գ. թ. Կ. Մահակյան, Ռ. Հովհաննիսյան):

Քաղաքի ազգագրական պատկերի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունի նաև Շիրակի ժողովրդական երգարվեստի գիտական արժեվորումը: Գործընթացը կենտրոնում սկիզբ է առել 1998 թվականից, մեծածավալ աշխատանք է կատարվել ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության արդի խնդիրների և զարգացման միտումների մեկնաբանման ուղղությամբ: Ամբողջացվել է նաև հետազոտական աշխատանքը XX դարակեսին Լենինականում ստեղծված գուսան Շահենի աշուղական դպրոցի ներկայացուցիչների վաստակի ըստ ամենայնի արժեվորման առումով (արվ. թ. Հ. Հարությունյան), շարունակվում է մարզկենտրոն Գյումրիում և գյուղական բնակավայրերում ժողովրդական երգի ու պարերի արդի կատարումների փոխակերպումների քննությունը, ընթացքի մեջ են Շիրակի ժամանակակից երաժշտական բանահյուսությանը նվիրված արխիվային նյութերի մշակումը, Ալեքսանդրապոլում տարածված պարերի զբաղմունքի 100 նմուշների համահավաք անվանացանկի կազմումն ու աշխատանքը դրանց տիպաբանական, ժանրային-ոճական բնութագրիչների ներկայացման ուղղությամբ (Ե. Վարոսյան): Միջազգային համագործակցության շրջանակներում ավարտման փուլին է հասցվել Հաագայի պատմական արդարության և հանդուրժողականության ինստիտուտի նախաձեռնությամբ կատարվող «Աշուղական ավանդույթներ. Կարս-Ալեքսանդրապոլ» համատեղ ծրագրի մեր մասը, որ նվիրված է XIX դարի և XX դարասկզբին երկու քաղաքների երաժշտական կյանքում նշանակալի դեր ունեցած հայ և թուրք աշուղների ստեղծագործական ժառանգության համեմատական քննությանը:

Գյումրու մշակութային և ազգագրական ուրույն դիմապատկերի կարևոր շտրիխներից մեկը նրա խոսվածքն է՝ իր արդի առանձնահատ-

կույություններով, որի համակողմանի քննությունը սկիզբ է առել կենտրոնում միայն վերջերս: Ավարտվել են նախապատրաստական աշխատանքները նաև գիտական մեկ այլ թեմայի («Շուշի–Ալեքսանդրապոլ. քաղաքային մշակույթի աղերսներ») ուսումնասիրությունը սկսելու համար: Ելակետն այն է, որ Անդրկովկասի ամենահայեցի, հասարակական ու կրթամշակութային ինքնատիպ կյանքով ապրած այս երկու հայաշատ կենտրոններն իրենց պատմական դերակատարությամբ ու մեր ժողովրդի կյանքում ունեցած նշանակությամբ, իրենց ավանդասիրությամբ ու քաղաքային մշակույթով բավական ընդհանրություններ և աղերսներ պիտի ունենան, որոնք կարոտ են հիմնավոր գիտական մեկնաբանության: 2012-ին կենտրոնի գիտաշխատողների՝ Արցախ գործողմամբ կապեր են հաստատվել Ստեփանակերտի համալսարանի հայագիտական կենտրոնի, երկրագիտական թանգարանի, Շուշիի պատմության թանգարանի գիտական հանրույթների հետ, մշակվել է համատեղ ուսումնասիրության ծրագիր, հաստատվել է փոխադարձ այցելությունների ժամանակացույց:

Կենտրոնում սկզբից եթե կարևորվեց տպագիր խոսք ունենալու անհրաժեշտությունը: Որոշվեց տարին մեկ հրատարակել «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածու՝ 14 տպագրական մամուլ ծավալով: Այսօր հրապարակի վրա են հանրապետության գիտական շրջանակներում բարի համբավ վայելող այդ ժողովածուի արդեն 15 հատորներ, որոնցում Շիրակի պատմությանը, հնագիտությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված շուրջ 300 հոդվածների, հրապարակումների և հաղորդումների գերակշիռ մասը հեղինակել են կենտրոնի գիտաշխատողները: 2010-ին կենտրոնում ստեղծվեց նաև «Շիրակի հնագիտական և պատմագագագրական ուսումնասիրություններ» մատենաշարը՝ նպատակ հետապնդելով խթանել ավարտված թեմաների ամբողջական տպագրությունը: Հրատարակվել են մատենաշարի երկու պրակներ, նաև տասնյոթ մենագրություններ, արխիվային նյութերի ու փաստաթղթերի երկու ստվարածավալ ժողովածուներ, ինչպես նաև «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովների նյութերի ութ հատորներ:

Տարիներն արդյունավետ եղան նաև հանրապետության ու արտասահմանյան գիտական ու մշակութային կազմակերպությունների հետ կապերի խորացման, միջազգային համագործակցության խթանման առումով: Կենտրոնն ապահովված է համակարգչային արդիական տեխնիկայով ու սարքավորումներով, կապի ժամանակակից միջոցներով: Սակայն առ այսօր անլուծելի է մնում սեփական շինության խնդիրը: «Ծնված օրից» կենտրոնն արդեն մի քանի ժամանակավոր հանգրվան է ունեցել, և թվում է՝ դեռ սարերի հետևում է այն բաղձալի պահը, երբ Գյումրիում վերջապես կավարտվի Ակադեմիայի սեփականությունը հանդիսացող նորակառույցի ավելի քան տասնութ տարի ձգձգվող ու ոչ մի կերպ չավարտվող շինարարությունը:

Շիրակը, Հայաստանի այլ պատմական գավառների նման, հոգևոր և նյութական մշակույթի անսպառ գանձեր ունի՝ հնագիտական ու պատմական մեծարժեք հուշարձաններ ու անհատակ անցյալ, դարերով ձևավորված ազգագրական գուներանգների ինքնատիպ գամմա ու անկրկնելի բա-

նահյուսություն, անգուգական կենցաղ ու դարերի խորքից եկող ավանդույթներ, զարմանահրաշ ճարտարապետություն ու նկարչություն, բազմազան արհեստներ ու զբաղմունքներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն և մեր բազմադարյա մշակույթի այլ ձեռակերտ գոհարներ: Այլ խոսքով՝ պատմամշակութային ծովածավալ ժառանգություն, որի կրողն ու փոխանցողը մեր ժամանակակիցն է: Նրան է բախտ վիճակվել շարունակել այդ գանձերի մերօրյա ուսումնասիրությունը: Այս ազգաշահ գործին է լծված նաև 1997-ից Գյումրիում գործող ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը՝ իր հավակնոտ ու համարձակ գիտական ծրագրերով, նաև իր մեծ ու փոքր հոգուերով:

ШИРАКСКИЙ ЦЕНТР АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

СЕРГО АЙРАПЕТЯН

Резюме

Ширакский центр арменоведческих исследований НАН РА основан в 1997 году. Основные научные направления: исследование новонайденных археологических памятников на территории Ширакского марза, древняя история бассейна р. Ахурян в I тыс. до н. э.; социально-политическая, общественная и культурная жизнь Александрополя и одноименного уезда; историко-этнографические исследования материальной и духовной культуры Александрополя–Ленинканана–Гюмри; этнопсихологические исследования (психокоррекция в стрессовых ситуациях, «фольклор бедствия»), народная музыка и история ашугской школы Александрополя.

За эти годы в центре исследовано более 15 археологических памятников, в том числе: пещерный пригород Ани в Ахурянском ущелье; крепость-поселение Айкадзора раннеурартского периода; храмовый комплекс Мец-Сепасара эпохи ранней бронзы; трехслойный памятник Азатана и т.д.; собран и разработан богатый этнографический материал; изучены демографические и культурные процессы в Александропольском уезде в XIX и в начале XX вв.. Изданы 15 томов «Сборника научных трудов», 8 сборников материалов международных конференций «Историко-культурное наследие Ширака», 2 тома серии книг «Археологические и историко-этнографические исследования Ширака» и 15 монографий.

THE SHIRAK CENTER OF ARMENOLOGICAL STUDIES

SERGO HAYRAPETYAN

S u m m a r y

The Shirak Center of Armenological Studies of NAS RA was founded in Gyumri in 1997. The scope of the researches are: the investigation of new archaeological monuments in the territory of the region; old history of the Akhurian river basin in the first millennium B.C.; social -political, social and cultural life of Alexandropol and its province; ethnodemography; Alexandropol-Leninakan-Gyumri, material and spiritual culture; historioethnography; ethnopsychological studies (mental toughness in stressful situations, “Disaster Folklore”), Shirak’s folk music; the history of Alexandropol’s band school.

In the course of the center’s existence there have been discovered 15 archaeological monuments, among them are the cave suburb of Ani situated in the Akhurian gorge; Haykadzor’s Early-Urartian castle-settlement; the Early Bronze Age templar complex of Mets Sepasar; Azatan’s three-layered monument and others. Rich material of ethnographic origin has been collected and cultivated, there have been investigated the demographic, educational and cultural processes in the province of Alexandropol in the 19th century and at the beginning of the 20th century. There have been published 15 volumes of “Research Papers”, 8 collections of materials of international conferences “Historical and Cultural Heritage of Shirak”, 2 volumes of series of books called “Archaeological and Historical-Ethnographic Studies of Shirak” and 15 monographs.